1. հեքսոկինազային և կաթնաթթու դեհիդրոգենազային
2. ֆոսֆոֆրուկտոկինազային և հեքսոկինազային
3. ֆոսֆոֆրուկտոկինազային և երկֆոսֆոգլիցերատկինազային
4. երկֆոսֆոգլիցերաթթուկինազային և պիրոլսադոլաթթուկինազային
5. հեքսոկինազային և պիրոլսադոլաթթուկինազային

206. Պենտոզֆոսֆատային ուղու ռեակցիաների արգասիք են.

1. ռիբոզ-5-ֆոսֆատը, սերոհեպտուլոզ-7-ֆոսֆատը
2. գլիցերալդեհիդը, երկօքսիացետոնֆոսֆատը
3. ֆրուկտոզ-1,6-երկֆոսֆատը, պիրոլսադոլաթթուն
4. գալակտոզ-1-ֆոսֆատը, ռիբուլոզ-5-ֆոսֆատը
5. քսիլուլոզ-4-ֆոսֆատը, ֆոսֆոէնոլպիրոլսադոլաթթուն

207. Եռկարբոնատային ցիկլի ռեակցիներին չեն մասնակցում հետևյալ դասի ֆերմենտները.

1. սինթետազները
2. օքսիդառեդուկտազները
3. տրանսֆերազները
4. հիդրատազները
5. լիազները

208. Ո՞ր ֆերմենտն է կատալիզում գլյուկոնեոգենեզի երկրորդ շրջան-ցիկ ռեակցիան.

1. ֆոսֆոգլյուկոնուտազը
2. գլյուկոզ-6-ֆոսֆատազը
3. ֆրուկտոզ-1,6-երկֆոսֆատազը
4. հեքսոկինազը
5. ֆոսֆոֆրուկտոկինազը

209. Ո՞րն է պենտոզֆոսֆատային ուղու հիմնական գործառույթն էրիթրոցիտներում.

1. ռիբոզ-5-ֆոսֆատի առաջացումը
2. ՆԱԴ-ՖH(H⁺)-ի առաջացումը
3. ԱԵՖ-ի սինթեզը
4. պենտոզֆոսֆատների քայքայումը
5. H₂O₂-ի վերականգնումը երկու մոլեկուլ ջրի

210. Ի՞նչ միացության է փոխակերպվում գլյուկոզ-6-ֆոսֆատը գլիկոլիզի ընթացքում.

1. գլյուկոզ
2. 6-ֆոսֆոգլյուկոնալակտոն
3. ֆրուկտոզ-6-ֆոսֆատ
4. ֆրուկտոզ-1-ֆոսֆատ
5. գլյուկոզ-1-ֆոսֆատ

211. Կրեբսի ցիկլի հիդրատացման ռեակցիան է.

1. L-լինձորաթթվից թրթնջկաքացախաթթվի առաջացումը
2. α-կետոգլյուտարաթթվից սաթաթթվային-KOA-ի առաջացումը
3. կիտրոնաթթվից իզոկիտրոնաթթվի առաջացումը
4. իզոկիտրոնաթթվից α-կետոգլյուտարաթթվի առաջացումը
5. ցիս-ակոնիտաթթվից իզոկիտրոնաթթվի առաջացումը

212. Նշված ռեակցիաներից ո՞րն է կատալիզվում դեհիդրոգենազով.

1. սաթաթթվային-K_oA → սաթաթթու
2. կիտրոնաթթու → իզոկիտրոնաթթու
3. գլյուկոզ → գլյուկոզ-6-ֆոսֆատ
4. լինձորաթթու → թրթնջկաքացախաթթու
5. քացախաթթվային-K_oA → կիտրոնաթթու

213. Կրեբսի ցիկլում կիտրոնաթթվի առաջացման ռեակցիան կատալիզում է.

1. լինձորաթթու դեհիդրոգենազը
2. կիտրոնաթթու սինթազը
3. իզոկիտրոնաթթու դեհիդրոգենազը
4. ֆումարազը

5. ակոնիտատհիդրատազը
214. Կրեբսի ցիկլի ֆերմենտները տեղակայված են.
1. միտոքոնդրիումների արտաքին թաղանթում
 2. միտոքոնդրիումների միջթաղանթային տարածությունում
 3. միտոքոնդրիումների մատրիքսում
 4. միտոքոնդրիումների ներքին թաղանթում
 5. բջջապլազմում
215. Գլիկոլիզի ֆերմենտները տեղակայված են.
1. միտոքոնդրիումների ներքին թաղանթում
 2. լիզոսոմներում
 3. էնդոպլազմային ռետիկուլումում
 4. բջջապլազմում
 5. միտոքոնդրիումների մատրիքսում
216. Պենտոզֆոսֆատային ցիկլի ֆերմենտները տեղակայված են.
1. լիզոսոմներում
 2. միտոքոնդրիումների մատրիքսում
 3. միկրոսոմում
 4. միտոքոնդրիումների ներքին թաղանթում
 5. բջջապլազմում
217. Նշել Կրեբսի ցիկլի այն ֆերմենտները, որոնց ակտիվությունն աճում է միտոքոնդրիումներում ՆԱԴ-ի բարձր կոնցենտրացիայի պայմաններում.
1. իզոկիտրոնաթթու դեհիդրոգենազ, α -կետոգլուտարաթթու դեհիդրոգենազ
 2. ֆումարազ, ակոնիտատհիդրատազ
 3. կիտրոնաթթու սինթազ, α -կետոգլուտարաթթու դեհիդրոգենազ
 4. α -կետոգլուտարաթթու դեհիդրոգենազ, խնձորաթթու դեհիդրոգենազ
 5. ակոնիտատհիդրատազ, իզոկիտրոնաթթու դեհիդրոգենազ
218. Գլիկոզենի սինթեզն ակտիվացնում է (են).
1. ինսուլինը
 2. գլյուկոկորտիկոստերոիդները

3. կատեխոլամինները
 4. գլյուկագոնը
 5. ց-ԱՄՖ-ն, Ca^{2+} -ի իոնները
219. Գլիկոգենի քայքայումը չեն խթանում.
1. գլյուկոկորտիկոստերոիդները
 2. կատեխոլամինները
 3. ինսուլինը
 4. գլյուկագոնը
 5. Ca^{2+} -ի իոնները
220. Ո՞ր ֆերմենտի մասնակցությամբ է ձևավորվում գլիկոգենի ճյուղավորված կառուցվածքը.
1. գլիկոգենսինթազի
 2. գլիկոգենֆոսֆորիլազի
 3. գլյուկոզ-6-ֆոսֆատազի
 4. ամիլա-1,4-1,6-տրանսգլիկոզիլազի
 5. ՈւԿՖ-գլյուկոզիլտրանսֆերազի
221. Ո՞րն է գլիկոլիզի առավելությունը.
1. գլիցերալդեհիդֆոսֆատի առաջացումը
 2. կաթնաթթվի առաջացումը
 3. էներգիայի անջատման արագ գործընթաց է
 4. ԱՄՖ-ի կուտակումը
 5. ֆրուկտոզ-6-ֆոսֆատի առաջացումը
222. Ո՞րն է գլիկոլիզի թերությունը.
1. կաթնաթթվի առաջացումը
 2. պիրոլիսադոլաթթվի առաջացումը
 3. արագ գործընթաց է
 4. ԱՄՖ-ի կուտակումը
 5. ԱԵՖ-ի առաջացումը
223. Ո՞ր բջիջներում է գլիկոլիզն էներգիայի միակ աղբյուրը.
1. հեպատոցիտներում
 2. կարդիոմիոցիտներում
 3. էրիթրոցիտներում

4. Էնտերոցիտներում
 5. կմախքային մկանների բջիջներում
224. Ելանյութային ֆոսֆորիլացում ընթանում է.
1. գլիկոգենոլիզի ընթացքում
 2. գլյուկոնեոգենոզի ընթացքում
 3. գլիկոգենեզի ընթացքում
 4. պենտոզֆոսֆատային ուղու ընթացքում
 5. Կրեբսի ցիկլում
225. Ո՞ր դեպքում է լյարդում պահեստավորվում գլյուկոզ.
1. երկարատև ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմաններում
 2. ածխաջրերով հարուստ սնունդ ընդունելուց 1-2 ժամ անց
 3. ածխաջրերով հարուստ սնունդ ընդունելուց 8-10 ժամ անց
 4. արյան գլյուկոզի ցածր կոնցենտրացիայի պայմաններում
 5. անաերոբ պայմաններում
226. Անաերոբ պայմաններում արյունում կուտակվում է.
1. պիրոլիսադոլաթթու
 2. կաթնաթթու
 3. պենտոզներ
 4. գլյուկոզ
 5. ֆրուկտոզ
227. Կաթնաթթվային ացիդոզը կանխող ֆիզիոլոգիական մեխանիզմ է.
1. կաթնաթթվի մասնակցությունը նուկլեոտիդների սինթեզին
 2. կաթնաթթվի մասնակցությունը ճարպաթթուների սինթեզին
 3. կաթնաթթվի ներառումը գլյուկոնեոգենեզում
 4. գլիկոլիզի ակտիվացումը
 5. գլիկոգենոլիզի ակտիվացումը
228. Գալակտոզեմիայի անբարենպաստ ազդեցությունը կանխելու նպատակով անհրաժեշտ է.
1. կիրառել տրանսֆերազի արգելակիչներ
 2. նշանակել առանց կաթնամթերքի սննդակարգ
 3. սնունդը հարստացնել գլյուկոզով

4. ներմուծել որոշակի ֆերմենտներ
5. բոլոր պատասխանները ճիշտ են

229. Ո՞ր նեակցիաներն են խանգարվում B_3 վիտամինի անբավարարության դեպքում.

1. ՆԱԴ- H_2 -ի օքսիդացումով ուղեկցվող նեակցիաները
2. պիրոլիսադոլաքթիլի հիդրատացման նեակցիաները
3. սաքաթթվի օքսիդացման նեակցիաները
4. իգոկիտրոնաքթիլի առաջացման նեակցիաները
5. α -կետոգլյուտարաքթիլի օքսիդացման նեակցիաները

230. Ի՞նչ փոխակերպման է ենթարկվում պիրոլիսադոլաքթին անաերոբ պայմաններում.

1. մնում է բջջապլլազմում
2. անցնում է միտոքոնդրիում և ենթարկվում օքսիդային դեկարբոսիլացման
3. վերականգնվում է առաջացնելով կաթնաքթու
4. օքսիդանում է առաջացնելով թրթնջկաքացախաքթու
5. վերականգնվում է առաջացնելով էթանոլ

231. Ո՞ր նեակցիայի արդյունքում է 2-ֆոսֆոգլիցերաքթիլից առաջանում ֆոսֆոէնոլպիրոլիսադոլաքթու.

1. հիդրատացման
2. ԱԵՖ-ի ծախս պահանջող սինթեզի
3. դեհիտրատացման
4. էնոլազային նեակցիայի
5. ելանյութային ֆոսֆորիլացման

232. Թրթնջկաքացախաքթուն.

1. Կրեբսի ցիկլի ելանյութ է
2. գլիկոլիզի է արգասիք
3. Կրեբսի ցիկլի միջանկյալ արգասիք է
4. պիրոլիսադոլաքթիլի դեկարբոքսիլացման արգասիք է
5. պենտոգֆոսֆատային ցիկլի արգասիք է

233. Ի՞նչ փոխակերպման է ենթարկվում պիրոլիսադոլաքթին աերոբ պայմաններում.

1. ներգրավվում է էոկարբոնատային ցիկլ

2. անցնում է միտոքոնդրիում և ենթարկվում օքսիդային դեկարբօսիլացման
3. վերականգնվում է՝ առաջացնելով կաթնաթթու
4. ներգրավվում է պենտոզֆոսֆատային ուղի
5. վերականգնվում է՝ առաջացնելով էթանոլ

234. Պենտոզֆոսֆատային ուղու և գլիկոլիզի փոխկապակցված աշխատանքը կարգավորում է.

1. սերոինեպտուլոզ-7-ֆոսֆատը
2. քսիլուլոզ-4-ֆոսֆատը
3. գալակտոզ-6-ֆոսֆատը
4. ֆոսֆոէնոլպիրոլիսադոլաթթուն
5. էրիթրոզ-4-ֆոսֆատը

235. Ֆրուկտոզ-6-ֆոսֆատից ֆրուկտոզ-1,6-երկֆոսֆատի առաջացման ռեակցիային անհրաժեշտ է.

1. ՆԱԴՖH·H⁺
2. ՆԱԴH·H⁺
3. ԱԵՖ
4. ՖԱԴ
5. ԳԵՖ

236. Եռկարբոնատային ցիկլի դեկարբօքսիլացման ռեակցիայի արդյունքում առաջանում է.

1. α-կետոգլյուտարաթթու
2. ացետոացետատ
3. սաթաթթու
4. քացախաթթվային-K_oA
5. ֆումարաթթու

237. HSK_oA-ն փոխադրում է.

1. ամինախմբեր
2. ֆոսֆատային խմբեր
3. ֆորմիլային խմբեր
4. ացիլային խմբեր
5. մեթիլային խմբեր

238. Սաթաթթվային- K_2O -սինթետազը կատալիզում է.

1. սաթաթթվի առաջացումը
2. ակոնիտաթթվի առաջացումը
3. սաթաթթվային- K_2O -ի առաջացումը
4. ֆունարաթթվի առաջացումը
5. սաթաթթվային- K_2O -ի հիդրոլիզը

239. Գլյուկոզի ցածր կոնցենտրացիայի պայմաններում, n° ր ֆերմենտն է այն ֆոսֆորիլացնում.

1. գլյուկոզ-6-ֆոսֆատազը
2. հեքսոկինազը
3. գլյուկոկինազը
4. գլյուկոզֆոսֆատիզոմերազը
5. գլյուկոմուտազը

240. Աղեստամոքսային ուղում երկշաքարների մարսմանը մասնակցում են.

1. մալթազը, գլյուկոկինազը
2. ամիլազը, սախարազը
3. էնոլազը, ակոնիտազը
4. լակտազը, մալթազը
5. սախարազը, գլիկոզիլազը

241. Ածխաջրերը բաշխել ըստ աղիներում ներծծման արագության.

1. ֆրուկտոզ
2. քսիլոզ
3. գալակտոզ
4. մանոզ
5. գլյուկոզ

242. Ո՞ր ռեակցիան է կատալիզում ֆոսֆոէնոլպիրոլիսաղողաթթու կարբոքսիկինազը.

1. գլյուկոզ-6-ֆոսֆատ + ՆԱԴՖ \rightarrow 6-ֆոսֆոգլյուկոնաթթու + ՆԱԴՖ H_2
2. պիրոլիսաղողաթթու + CO_2 + ԱԵՖ \rightarrow թրթնջկաքացախաթթու + ԱԿՖ + H_3PO_4

3. թրթնջկաքացախաթթու + ԳԵՖ \rightarrow ֆոսֆոէնոլպիրոլիսադոլաթթու + CO_2 + ԳԿՖ
4. ֆրուկտոզ + ԱԵՖ \rightarrow ֆրուկտոզ-1-ֆոսֆատ + ԱԿՖ
5. 6-ֆոսֆոգլյուկոնաթթու + ՆԱԴ-Ֆ \rightarrow ռիբուլոզ-5-ֆոսֆատ + ՆԱԴ-Ֆ H_2 + CO_2

243. Գլյուկոզն անցնում է էնտերոցիտներ հետևյալ եղանակով.

1. ադրենալինի մասնակցությամբ
2. Na^+ - իոնների օգնությամբ
3. Ca^{2+} -ի իոնների օգնությամբ
4. պինոցիտոզի եղանակով
5. փոխակերպվելով ֆրուկտոզի

244. Ընտրել նշված ֆերմենտներն արգելակող միացությունները.

1. պիրոլիսադոլաթթու դեհիդրոզենազ
 2. կիտրոնաթթու սինթազ
 3. իզոկիտրոնաթթու դեհիդրոզենազ
 4. α -կետոգլյուտարաթթու դեհիդրոզենազ
 5. սաթաթթու դեհիդրոզենազ
- ա) ԱԵՖ
բ) ՆԱԴ- H^+ - H^+
գ) կիտրոնաթթու
դ) թրթնջկաքացախաթթու
ե) քացախաթթվային- K_2A

245. Բջջի էներգիային բարձր մակարդակի պայմաններում Կրեբսի ցիկլի n° ր ֆերմենտների ակտիվությունն է արգելակվում.

1. սաթաթթվային- K_2A -սինթազի, ֆումարազի
2. ակոնիտազի, սաթաթթու դեհիդրոզենազի
3. կիտրոնաթթու սինթազի, α -կետոգլյուտարաթթու դեհիդրոզենազի
4. գլիցերալդեհիդրդեհիդրոզենազի, իզոկիտրոնաթթու դեհիդրոզենազի
5. խնձորաթթու դեհիդրոզենազի, գլյուկոկինազի

246. Գլյուկոզն արյան շրջանառությունից անցնում է բջիջներ հետևյալ եղանակով.

1. K^+ - իոնների օգնությամբ
2. պինոցիտոզի եղանակով
3. ալբումինի մասնակցությամբ
4. GLUT-ի միջոցով
5. կարնիտինի մասնակցությամբ

247. Ընտրել α -կետոգլյուտարաթթվի օքսիդացման արգելակիչը.

1. գլյուկոզ
2. ԱԿՖ
3. ՆԱԴՖ \cdot H₂
4. 2,4-երկնիտրոֆենոլ
5. կիտրոնաթթու

248. Ինչպե՞ս է օգտագործվում գլյուկոզի քայքայման արդյունքում առաջացած ՆԱԴ-H⁺·H⁺-ը անաերոբ պայմաններում.

1. օքսիդանում է բջջապլազմում
2. օքսիդացնում է պիրոլիսադոլաթթուն
3. պիրոլիսադոլաթթուն վերականգնում է կաթնաթթվի
4. օքսիդացնում է ֆոսֆոէնոլպիրոլիսադոլաթթուն
5. ֆոսֆոէնոլպիրոլիսադոլաթթուն փոխակերպում է պիրոլիսադոլաթթվի

249. Ո՞ր պնդումն է սխալ արտահայտում օրգանիզմում նյութափոխանակային ուղիների կարգավորման առանձնահատկությունները.

1. հյուսվածքային շնչառության արգելակիչները նվազեցնում են Կրեբսի ցիկլի ռեակցիաների արագությունը
2. Կրեբսի ցիկլի արագությունը կախված չէ թթվածնի կոնցենտրացիայից
3. ԱԵՖ-ը ճնշում է քացախաթթվային-K_oA-ի այրումը
4. իզոլիտրոնաթթու դեհիդրոգենազը կարգավորում է Կրեբսի ցիկլի ռեակցիաների արագությունը
5. ԱՄՖ-ն խթանում է քացախաթթվային-K_oA-ի այրումը

250. Հիպոգլիկեմիայի պայմաններում ո՞ր ոչ ածխաջրային միացություններից է սինթեզվում գլյուկոզ.

1. լիզինից
2. արախիդոնաթթվից սինթեզված էյկոզանոիդներից
3. ճարպերի քայքայումից անջատված ճարպաթթուներից
4. ճարպերի քայքայումից անջատված գլիցերոլից
5. լեյցինից

251. Համապատասխանեցնել գործընթացը և ելանյութը (արգասիքը).

1. հյուսվածքային շնչառություն
 2. գլիկոլիզ
 3. պենտոզֆոսֆատային ուղի
 4. գլյուկոնեոգենեզ
 5. սպիրտային խմորում
- ա) կաթնաթթու
բ) ռիբոզ-5-ֆոսֆատ
գ) էթանոլ
դ) գլյուկոզ
ե) H₂O

252. Կրեբսի ցիկլի ելանյութային ֆոսֆորիլացման ռեակցիայի ֆերմենտ է.

1. կիտրոնաթթու սինթազը
2. ակոնիտազը
3. խնձորաթթու դեհիդրոգենազը
4. սաքաթթու դեհիդրոգենազը
5. իզոկիտրոնաթթու դեհիդրոգենազը

253. Երկարատև քաղցի ժամանակ արյունում նվազում է գլյուկոզի քանակությունը: Ո՞ր գործընթացն է ակտիվանում լյարդում այդ պայմաններում.

1. հիդրոլիզը
2. լիպոլիզը
3. գլյուկոնեոգենեզը
4. գլիկոգենոգենեզը
5. լիպոգենեզը

254. Քանի՞ մոլեկուլ ՆԱԴ-Ֆ է վերականգնվում պենտոզֆոսֆատային ցիկլում երեք մոլեկուլ գլյուկոզի օքսիդացման արդյունքում.

1. 4 ՆԱԴ-ՖH₂
2. 6 ՆԱԴ-ՖH₂
3. 12 ՆԱԴ-ՖH₂
4. 3 ՆԱԴ-ՖH₂
5. 9 ՆԱԴ-ՖH₂

255. Սաթաթթու դեհիդրոգենազը.

1. պարունակում է թիամինկրկնակիֆոսֆատ կոֆերմենտ
2. կատալիզում է սաթաթթվից սաթաթթվային-KoA-ի առաջացումը
3. ֆլավինկախյալ ֆերմենտ է
4. կատալիզում է սաթաթթվային-KoA-ից սաթաթթվի առաջացումը
5. պիրիդինկախյալ ֆերմենտ է

256. Կորիի ցիկլի գործառույթն է.

1. գլյուկոզից ամինաթթուների առաջացումը
2. գլյուկոզից կետոնային մարմինների առաջացումը
3. գլիկոլենից գլյուկոզի առաջացումը
4. ամինաթթուներից գլյուկոզի առաջացումը
5. կաթնաթթվից գլյուկոզի առաջացումը

257. Ո՞ր գործընթացն է ակտիվանում լյարդում, եթե արյունում գլյուկոզի քանակությունը 8.2 մմոլ/լ է.

1. լիպոգենեզը
2. գլյուկոզի քայքայումը
3. գլյուկոնեոգենեզը
4. գլիկոլենոլիզը
5. գլիկոլենոգենեզը

258. Անվանել պենտոզֆոսֆատային ցիկլի ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.


1. գլյուկոզ-6-ֆոսֆատ + ՆԱԴ-Ֆ → 6-ֆոսֆոգլյուկոնոլակտոն + ՆԱԴ-ՖH⁺ + H⁺

2. 6-ֆոսֆոզլյուկոնուլակտոն \rightarrow 6-ֆոսֆոզլյուկոնաթթու
3. ռիբուլոզ-5-ֆոսֆատ \rightarrow քսիլուլոզ-4-ֆոսֆատ
4. քսիլուլոզ-5-ֆոսֆատ + ռիբոզ-5-ֆոսֆատ \rightarrow սեդոհեպտուլոզ-7-ֆոսֆատ + գլիցերալդեհիդ-3-ֆոսֆատ
5. քսիլուլոզ-5-ֆոսֆատ + էրիթրոզ-4-ֆոսֆատ \rightarrow գլիցերալդեհիդ-3-ֆոսֆատ + ֆրուկտոզ-6-ֆոսֆատ


259. Ինչպե՞ս է ազդում ԱԵՖ-ի և ԱՄՖ-ի կոնցենտրացիայի աճը ֆոսֆոֆրուկտոկինազի ակտիվության վրա.

1. ԱԵՖ-ի կոնցենտրացիայի աճը խթանում է ֆերմենտի ակտիվությունը
2. ԱՄՖ-ի բարձր կոնցենտրացիայի պայմաններում ֆերմենտը ակտիվանում է, ԱԵՖ-ի բարձր կոնցենտրացիայի պայմաններում՝ արգելակվում
3. ԱՄՖ-ի կոնցենտրացիայի աճը արգելակում է ֆերմենտը
4. ԱՄՖ-ի բարձր կոնցենտրացիայի պայմաններում ֆերմենտը արգելակվում է, ԱԵՖ-ի բարձր կոնցենտրացիայի պայմաններում՝ ակտիվանում
5. ԱԵՖ-ի և ԱՄՖ-ի կոնցենտրացիաների տատանումները չեն ազդում ֆերմենտի ակտիվության վրա


260. Ո՞ր գործընթացն է ներկայացված և ո՞ր ֆերմենտն է այն կատալիզում.




261. Լրացնել եռկարբոնատային ցիկլի ռեակցիաները և անվանել այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.




262. Ներկայացնել պիրոլիսաղողաթթու դեհիդրոզենագային համալիրով կատալիզովոլ ռեակցիաները.



263. Ներկայացնել գլյուկոնեոզենզի անդարձելի ռեակցիաները և այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.




264. Լրացնել պենտոզֆոսֆատային ցիկլի օքսիդային փուլի ռեակցիաները և անվանել այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.




265. Գլիցերոլֆոսֆատային մաքոքային մեխանիզմին բնորոշ չէ.

1. բջջապլազմային և միտոքոնդրիումային գլիցերոլֆոսֆատ-դեհիդրոզենագ ֆերմենտները ունեն տարբեր կոֆերմենտներ
2. մեխանիզմը ակտիվ է գործում գորշ ճարպային հյուսվածքում
3. մաքոքային մեխանիզմի առանցքային ֆերմենտ է գլիցերոլֆոսֆատդեհիդրոզենագը
4. մաքոքային մեխանիզմի առանցքային ֆերմենտ է երկօքսիացետոնֆոսֆատդեհիդրոզենագը
5. մեխանիզմը ակտիվ է գործում լյարդում

266. Լրացնել եռկարբոնատային ցիկլի ռեակցիաները մինչև իզոկլիտրոնաթթվի առաջացումը և անվանել այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.



267. Լրացնել պիրոխաղողաթթվի օքսիդային դեկարբօքսիլացման ռեակցիաները և անվանել այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.



268. Լրացնել եռկարբոնատային ցիկլի ռեակցիաները և անվանել այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.

ցիսակոնհիտաթթու $\rightarrow \dots \rightarrow \dots \rightarrow \dots \rightarrow$ սաթաթթու

269. Ո՞ր համալիրն է կատալիզում α -կետոգլյուտարաթթվից սաթաթթու- K_2A -ի առաջացումը.

1. պիրոխաղողաթթու դեհիդրոգենազային համալիրը
2. օքսիդավերականգնող ֆերմենտների համալիրը
3. α -կետոգլյուտարատդեհիդրոգենազային համալիրը
4. ՖԱԴ-H₂, սինթետազային համալիրը
5. օքսիդառեդուկտազային համալիրը


270. Կրեբսի ցիկլի ո՞ր ֆերմենտն է կատալիզում իզոկիտրոնաթթվի առաջացումը.

1. իզոկիտրոնաթթու դեհիդրոգենազը
2. ակոնհիտազը
3. ֆումարազը
4. իզոկիտրոնաթթու սինթազը
5. կիտրոնաթթու սինթազը


271. Ո՞ր ֆերմենտներն են կարգավորում գլյուկոզի օքսիդացումը մինչև H_2O և CO_2 .

1. գլյուկոկինազը, արբոլազը
2. ֆոսֆոֆրուկտոկինազը, ֆրուկտոզ-6-ֆոսֆատազը
3. α -կետոգլյուտարաթթու դեհիդրոգենազը, ակոնհիտազը
4. պիրոխաղողաթթու կինազը, հեքսոկինազը
5. կիտրոնաթթու սինթազը, ակոնհիտազը


272. Լրացնել գլյուկոզի անաերոբ օքսիդացման առաջին փուլի ռեակցիաները և անվանել այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.




273. Լրացնել գլյուկոզի անատերոք օքսիդացման երկրորդ փուլի ռեակցիաները և անվանել այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.




274. Լրացնել գլյուկոզի սինթեզի ռեակցիաները և անվանել այդ ռեակցիաները կատալիզող ֆերմենտները.



275. Լրացնել գլիկոզենոզենեզի ռեակցիաները.



276. Ո՞ր գործընթացն է ներկայացված և ո՞ր ֆերմենտն է կատալիզում ռեակցիան.



277. Մալաթասպարտատային մաքոքային մեխանիզմին բնորոշ է.

1. ավելի բարձր ակտիվություն գորշ ճարպային հյուսվածքում
2. մաքոքային համակարգի մասնակցությամբ վերականգնված ՖԱԴ-H₂-ը էլեկտրոնները փոխանցում է ԷՓՇ
3. մաքոքային մեխանիզմի առանցքային ֆերմենտն է բջջապլազմային գլիցերոլ-3-ֆոսֆատդեհիդրոզենազը
4. բջջապլազմային ՆԱԴ-H+H⁺-ի և խնձորաթթու դեհիդրոզենազի ազդեցությամբ թրթնջկաքացախաթթուն վերականգնվում է խնձորաթթվի, որն անցնում է միտոքոնդրիումներ և օքսիդանում Կրեբսի ցիկլում՝ առաջացնելով թրթնջկաքացախաթթու
5. մաքոքային մեխանիզմի առանցքային ֆերմենտն է միտոքոնդրիումային գլիցերոլ-3-ֆոսֆատդեհիդրոզենազը

278. Ո՞ր ամինաթթուներն են գլիկոզենային.

1. լեյցինը
2. ամինաթթուները, որոնց ածխածնային կմախքները կարող են մասնակցել գլյուկոզի սինթեզին
3. լիզինը
4. բուլբ ամինաթթուները
5. ոչ մեկը

279. Գլյուկոնեոգենեզին բնորոշ չէ.

1. գործընթացի առաջին փուլի ռեակցիաներն ընթանում են միատրոնդրիումներում
2. ապահովում է գլյուկոզի պահանջարկը ածխաջրային անբավարարության պայմաններում
3. նպաստում է կաթնաթթվի կուտակմանը բջիջներում
4. գլյուկոնեոգենեզի յուրահատուկ ֆերմենտները սինթեզվում են կորտիզոլի և գլյուկագոնի ազդեցությամբ
5. մարդու օրգանիզմում գլյուկոնեոգենեզի եղանակով մեկ օրում առաջանում է մի քանի հարյուր գրամ գլյուկոզ

280. Պիրոլիսադոլաթթվից կարո՞ղ է սինթեզվել գլյուկոզ, եթե և՛ եռկարբոնատային ցիկլը, և՛ օքսիդային ֆոսֆորիլացումը արգելակված են.

1. կարող է, քանի որ եռկարբոնատային ցիկլի արգասիքները չեն մասնակցում գլյուկոնեոգենեզին
2. չի կարող, քանի որ գլյուկոնեոգենեզի համար անհրաժեշտ է ԱԵՖ-ի էներգիա, ԳԵՖ և ՆԱԴ- H^+H^+
3. չի կարող, քանի որ պիրոլիսադոլաթթուն գլյուկոզի սինթեզի ելանյութ չէ
4. չի կարող, քանի որ գլյուկոզը սինթեզվում է բջջապլազմում
5. չի կարող, քանի որ գլյուկոզը սինթեզվում է միատրոնդրիումներում

281. Կենդանական բջիջներում ճարպաթթուներից կարո՞ղ է կաթնաթթու սինթեզվել.

1. կարող է, եթե բջջում ԱԵՖ-ի մակարդակը բարձր է

2. ճարպաթթուների քայքայման արգասիքը քացախաթթվային-K_oA-ն է, որը չի կարող փոխակերպվել պիրոլիսադոլաթթվի, հետևաբար և կաթնաթթվի
3. կարող է սինթեզվել միտոքոնդրիումներում
4. կարող է սինթեզվել բջջապլազմում
5. կարող է սինթեզվել, եթե բջջում բարձր է ԱՄՖ-ի մակարդակը

282. Նշված ֆերմենտներից ո՞րն է կատալիզում օքսիէթիլթիամինկրկ-նակիֆոսֆատի առաջացումը պիրոլիսադոլաթթվի դեկարբօքսիլացման գործընթացում.

1. դիհիդրոլիպոիլտրանացետիլազը
2. պիրոլիսադոլաթթու դեկարբօքսիլազը
3. պիրոլիսադոլաթթու դեհիդրոգենազը
4. դիհիդրոլիպոիլդեհիդրոգենազը
5. պիրոլիսադոլաթթու կինազը

283. Ինչո՞վ է պայմանավորված կաթնաթթվի կոնցենտրացիայի աճը ալյունում ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմաններում.

1. արգելակված են Կրեբսի ցիկլի ֆերմենտները
2. ակտիվացած է գլյուկոնեոգենեզը
3. խթանված են պիրոլիսադոլաթթու դեհիդրոգենազային համալիրի ֆերմենտները
4. արգելակված են գլիկոլիզի ֆերմենտները
5. պայմանավորված է թթվածնային քաղցով

284. Էրիթրոցիտներում գլյուկոզի օքսիդացմանը մասնակցող ֆերմենտն է.

1. պիրոլիսադոլաթթու դեհիդրոգենազը
2. գլյուկոկինազը
3. գլիցերալդեհիդֆոսֆատդեհիդրոգենազը
4. գլյուկոզ-6-ֆոսֆատազը
5. գլիկոգենսինթազը

285. Գլյուկոզի օքսիդացման անոթ ուղին մեկնարկվում է.

1. կաթնաթթվից
2. քացախաթթվային-K_oA-ից
3. պիրոլիսադոլաթթվից

4. գլյուկոզ-6-ֆոսֆատից
5. թրթնջկաքացախաթթվից

286. Ածխաջրային փոխանակության կարգավորիչ ֆերմենտների արգելակիչ է (ե՞ն) .

1. թրթնջկաքացախաթթուն
2. կիտրոնաթթուն
3. ՖԱԴ-H₂-ը, գլյուկոզ-6-ֆոսֆատը
4. կիտրոնաթթուն, ՖԱԴ-H₂-ը
5. ՆԱԴ-H⁺ H⁺-ը, ֆումարաթթուն

287. Գլիկոլիզի ալոստերիկ արգելակիչ է .

1. պիրոլիսադոլաթթուն
2. ԱՄՖ-ն
3. ԱԵՖ-ը
4. կիտրոնաթթուն
5. ֆրուկտոզ-6-ֆոսֆատը

288. Ինչպե՞ս կփոփոխվի պիրոլիսադոլաթթվից թրթնջկաքացախաթթվի սինթեզի ռեակցիայի արագությունը նշված միացությունների կոնցենտրացիայի նվազման պայմաններում.

1. պիրոլիսադոլաթթու կարբօքսիլազ
2. պիրոլիսադոլաթթու դեկարբօքսիլազ
3. ԱԵՖ
4. CO₂

ա) կանի

բ) կնվազի

գ) չի փոփոխվի

289. Ո՞րն է ֆրուկտոզ-2,6-երկֆոսֆատի նշանակությունը նյութափոխանակային գործընթացներում.

1. արգելակելով ֆրուկտոզ-1,6-երկֆոսֆատազը՝ ճնշում է գլյուկոնեոգենեզը
2. արգելակում է գլիկոգենի քայքայումը
3. արգելակում է պիրոլիսադոլաթթու դեհիդրոգենազ ֆերմենտի ակտիվությունը
4. խթանում է կետոնային մարմինների սինթեզը

5. կարգավորում է պենտոզֆոսֆատային ուղին
290. Ո՞ր գործոնը չի ազդում ածխաջրային փոխանակության ֆերմենտների ակտիվության վրա.
1. թթվածնի մակարդակը
 2. կենսաքաղանթների թափանցելիությունը
 3. ԱԵՖ-ի մակարդակը
 4. ԳԵՖ-ի մակարդակը
 5. ԱՄՖ-ի մակարդակը
291. Օրգանիզմում գլյուկոզի աղբյուր կարող է ծառայել.
1. ֆոսֆոէնոլպիրոլիսադոլաթթուն
 2. լեյցինը
 3. քացախաթթվային- K_6A -ն
 4. ալանինը
 5. գլիցերոլը
292. Քացախաթթվային- K_6A -ի կուտակումը միտոքոնդրիումներում.
1. ակտիվացնում է գլիկոլիզը
 2. արգելակում է պենտոզֆոսֆատային ուղին
 3. ակտիվացնում է գլյուկոնեոգենեզը
 4. խթանում է պիրոլիսադոլաթթվի օքսիդային դեկարբօքսիլացումը
 5. արագացնում է պիրոլիսադոլաթթվի օքսիդային դեկարբօքսիլացումը
293. Ածխաջրային փոխանակության կարգավորիչ ֆերմենտների արգելակիչներ են.
1. թրթնջկաքացախաթթուն, ՆԱԴ- H^+H^+ -ը
 2. խնձորաթթուն, կիտրոնաթթուն
 3. պիրոլիսադոլաթթուն, ՖՄՆ-ն
 4. ՆԱԴ- H^+H^+ -ը, քացախաթթվային- K_6A ն
 5. ՖԱԴ- H_2 -ը, քացախաթթվային- K_6A -ն
294. Ո՞րն է ֆրուկտոզ-2,6-երկֆոսֆատի նշանակությունը նյութափոխանակության գործընթացներում.
1. արգելակում է գլիկոլիզը

2. ազդակային մոլեկուլ է և կարգավորիչ միացություն
3. արգելակում է պիրոլիսադոլաթթու դեհիդրոզենազ ֆերմենտի ակտիվությունը
4. արգելակելով ֆոսֆոֆրուկտոկինազը՝ խթանում է գլիկոլիզը
5. խթանելով ֆրուկտոզ-1,6-երկֆոսֆատազը ճնշում է գլյուկոնեոզենեզը

295. Կրեբսի ցիկլի ո՞ր ֆերմենտի ակտիվությունն է նվազում միտոքոնդրիումների մատրիքսում մալոնաթթվի կուտակման դեպքում.

1. ակոնիտազի
2. կիտրոնաթթու սինթազի
3. սաթաթթու դեհիդրոզենազի
4. իզոկիտրոնաթթու դեհիդրոզենազի
5. α -կետոգլյուտարաթթու դեհիդրոզենազի

296. Ի՞նչ է նշանակում գլյուկոնեոզենեզ.

1. ֆրուկտոզից գլյուկոզի առաջացում
2. գլիկոզենի սինթեզ
3. գլիկոզենի քայքայում
4. գլյուկոզի սինթեզ ոչածխաջրային միացություններից
5. գլյուկոզի օքսիդացում

297. Կրեբսի ցիկլի ո՞ր ֆերմենտի ակտիվությունն է արգելակվում միտոքոնդրիումների մատրիքսում սաթաթթվային- K_2A -ի կուտակման դեպքում.

1. սաթաթթու դեհիդրոզենազի
2. ֆումարազի
3. կիտրոնաթթու սինթազի
4. խնձորաթթու դեհիդրոզենազի
5. իզոկիտրոնաթթու դեհիդրոզենազի

298. Կրեբսի ցիկլի ո՞ր ֆերմենտն է մասնակցում Q - CoA -ի առաջացմանը.

1. կիտրոնաթթու սինթազը
2. սաթաթթու- K_2A -կինազը
3. α -կետոգլյուտարաթթու դեհիդրոզենազը

4. ֆունարազը
5. իզոկլիտրոնաթթու դեհիդրոզենազը

299. Քանի մոլեկուլ ԱԵՖ է սինթեզվում հետևյալ փոխանակային գործընթացներում (լրացնել միջանկյալ ռեակցիաները)։

1. 2 պիրոլիսադոլաթթու \rightarrow \rightarrow 2 սաթաթթվային- K_2O
2. 2 սաթաթթվային- K_2O \rightarrow \rightarrow 2 ֆունարաթթու
3. 2 սաթաթթվային- K_2O \rightarrow 2 սաթաթթու
4. 2 ֆունարաթթու \rightarrow 2 խնձորաթթու
5. գլյուկոզ \rightarrow 2 պիրոլիսադոլաթթու

300. Ածխաջրերի փոխանակության n° ր գործընթացը կխանգարվի, եթե բջջում աճի բիոտինային ֆերմենտների արգելակիչի՝ ավիդինի քանակությունը.

1. պիրոլիսադոլաթթու \rightarrow թրթնջկաքացախաթթու \rightarrow գլյուկոզ
2. ֆոսֆոէնոլպիրոլիսադոլաթթու \rightarrow պիրոլիսադոլաթթու
3. գլյուկոզ \rightarrow \rightarrow ռիբոզ-5-ֆոսֆատ
4. ֆրուկտոզ-6-ֆոսֆատ \rightarrow գլյուկոզ-6-ֆոսֆատ
5. թրթնջկաքացախաթթու \rightarrow \rightarrow կիտրոնաթթու

301. Ի՞նչ էներգիային արդյունավետություն ունի սաթաթթվից թրթնջկաքացախաթթվի առաջացումը Կրեբսի ցիկլում: Ներկայացնել փոխակերպման ռեակցիաները, անվանել ֆերմենտները, կոֆերմենտները:

302. Հաշվարկել սախարոզի մինչև CO_2 և H_2O քայքայման արդյունքում առաջացած ԱԵՖ-ի քանակությունը: Կփոխվի արդյո՞ք գործընթացի էներգիային արդյունավետությունը, եթե այն ընթանա անթթվածնային պայմաններում:

303. Քանի՞ մոլեկուլ ԱԵՖ և ԳԵՖ է պահանջվում պիրոլիսադոլաթթվից մեկ մոլեկուլ գլյուկոզ սինթեզելու համար:

304. Ի՞նչ փոխակերպումների է ենթարկվում կաթնաթթուն լարված մկանային աշխատանքից հետո: Քանի՞ մոլ կաթնաթթվի օքսիդացումը կապահովի 4 մոլ գլյուկոզի սինթեզը:

305. Ինչքա՞ն ԱԵՖ է առաջանում մեկ մոլեկուլ գլյուկոզի աերոբ օքսիդացման արդյունքում, եթե գործում է ՆԱԴ-H₂-ի փոխադրման գլիցերո-ֆոսֆատային մաքոքային մեխանիզմը:

306. Քանի՞ մոլ սերին է անհրաժեշտ 3 մոլ գլյուկոզի սինթեզի համար: Ի՞նչ փոխակերպումների է ենթարկվում սերինը:

307. Քանի՞ մոլեկուլ ԱԵՖ է անհրաժեշտ մեկ մոլեկուլ գլյուկոզից ֆրուկտոզ-1,6-երկֆոսֆատի առաջացման համար:

308. Գլյուկոզի անաերոբ քայքայման երկրորդ փուլի ընթացքում առաջանում է երկու մոլեկուլ ֆոսֆոտրիոզ: Քանի՞ մոլեկուլ ԱԵՖ է սինթեզվում այդ փուլում յուրաքանչյուր ֆոսֆոտրիոզի փոխակերպման արդյունքում:

309. Քանի՞ մոլեկուլ ԱԵՖ-ի սինթեզ է ապահովում երկու մոլեկուլ α -կետոգլյուտարաթթվի օքսիդային դեկարօքլսիլացումը: Ներկայացնել գործընթացը իրականացնող համալիրի կառուցվածքը:

310. Ինչքա՞ն ԱԵՖ և կիտրոնաթթու կծախսվի կիտրոնաթթվից մեկ մոլեկուլ գլյուկոզ սինթեզելու համար:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ գործառույթներ են իրականացնում ածխաջրերը:
2. Ի՞նչ կենսաբանական նշանակություն ունի գլիկոլիդային կապը:
3. Որո՞նք են ածխաջրերը բացահայտող որակական ռեակցիաները:
4. Ինչո՞վ են պայմանավորված շաքարների վերականգնողական հատկությունները, ո՞ր շաքարներն են օժտված այդ հատկություններով:
5. Ի՞նչ կառուցվածք ունի α -D-ֆրուկտոֆուրանոզը և դրա անոմերը:
6. Ի՞նչ կառուցվածք ունի α -D-գլյուկոպիրանոզը և դրա էպիմերը (ըստ C-2):
7. Որո՞նք են սուլֆատային խումբ պարունակող հետերոբազմաշաքարները:
8. Ինչո՞վ է պայմանավորված միաշաքարների ստերեոիզոմերների քանակությունը:
9. Ի՞նչ թթուներ են առաջանում գալակտոզի ալդեհիդային խմբի օքսիդացման արդյունքում:
10. Որո՞նք են առավել լայն տարածված N-գլիկոլիդները:
11. Ո՞րն է ֆոսֆորիլացված միաշաքարների ֆիզիոլոգիական նշանակությունը:
12. Ինչպե՞ս է ապահովվում գլյուկոզի կայուն մակարդակը արյունում 48-ժամյա քաղցից հետո:
13. Որո՞նք են ածխաջրերի մարսումը իրականացնող ֆերմենտները:
14. Ո՞ր ֆերմենտներն են մասնակցում օսլայի մարսմանը:
15. Ո՞ր ֆերմենտն է կատալիզում α -1,6 կապի առաջացումը գլիկոզեմի մոլեկուլում:
16. Ի՞նչ եղանակով են միաշաքարները փոխադրվում էնտերոցիտներ:
17. Ո՞ր ֆերմենտն է ֆոսֆորիլացնում գլյուկոզը լյարդում:
18. Ածխաջրային փոխանակության կարգավորման ի՞նչ մեխանիզմներ են գործում օրգանիզմում:

19. Գլյուկոզի կոնցենտրացիայի կարգավորման ի՞նչ մեխանիզմներ են գործում օրգանիզմում:
20. Ինչպե՞ս են փոխկապակցված ածխաջրերի, լիպիդների և սպիտակուցների փոխանակության գործընթացները:
21. Մինչև ո՞ր արգասիքի առաջացումն է համընկնում ածխաջրերի օքսիդացման «աներոբ» և «անաերոբ» ուղիները:
22. Ի՞նչ միացություն է առաջանում պիրոլիսաղոդաթթվից օքսիդային դեկարբոքսիլացման արդյունքում:
23. Գլիկոլիզի ո՞ր ռեակցիաներում է ծախսվում ԱԵՖ:
24. Գլիկոլիզի ո՞ր ռեակցիաներում է սինթեզվում ԱԵՖ:
25. Ո՞ր սպիտակուցներն են գլյուկոզ փոխադրում:
26. Ո՞ր հորմոնն է խթանում գլիկոզենեզը:
27. Ո՞ր հորմոններն են արգելակում գլիկոզենեզը:
28. Ի՞նչ նշանակություն ունեն ֆոսֆորիլացման և դեֆոսֆորիլացման գործընթացները ածխաջրային փոխանակության ֆերմենտների ակտիվության կարգավորումում:
29. Ո՞րն է պենտոզֆոսֆատային ուլու նշանակությունը ճարպաթթուների փոխանակությունում:
30. Ո՞ր ֆերմենտն է կատալիզում երկօքսիացետոնֆոսֆատի և գլիցերալդեհիդֆոսֆատի առաջացումը:
31. Ո՞ր ռեակցիան է սահմանափակում գլիկոլիզի արագությունը:
32. Քանի՞ մոլեկուլ ԱԵՖ է ծախսվում գլիկոլիզի ընթացքում:
33. Սկանների գլիկոզենը կարո՞ղ է գլյուկոզ մատակարարել արյան շրջանառություն:
34. Էրիթրոցիտներում փոխանակային ո՞ր ուղին է էներգիա մատակարարում:
35. Ո՞րն է ածխաջրերի անաերոբ օքսիդացման կենսաբանական նշանակությունը:
36. Կարո՞ղ է զարգանալ հիպերգլիկեմիա մակերիկամների կեղևի վնասման դեպքում:
37. Ի՞նչ կառուցվածք ունի պիրոլիսաղոդաթթվի օքսիդային դեկարբոքսիլացման ֆերմենտային համալիրը:

38. Որո՞նք են պիրոխաղողաթթվից գլյուկոզի սինթեզն իրականացնող առանցքային ֆերմենտները:
39. Ո՞րն է էլանյութային և օքսիդային ֆոսֆորիլացման տարբերությունը:
40. Ո՞րն է եռկարբոնատային ցիկլի կենսաբանական նշանակությունը, կապը կենսաբանական օքսիդացման գործընթացների հետ:
41. Եռկարբոնատային ցիկլի ո՞ր ռեակցիաներն են կատալիզվում ՆԱԴ-կախյալ ֆերմենտներով:
42. Ո՞ր միացությունների կենսասինթեզին է մասնակցում պիրոխաղողաթթուն:
43. Ո՞րն է գլյուկոզի օքսիդացման պենտոզֆոսֆատային ուղու կենսաբանական դերը:
44. Ինչպե՞ս է կարգավորվում գլիկոլենոլիզը մկաններում:
45. Ինչպե՞ս է կարգավորվում գլիկոլենոզենեզը լյարդում:
46. Ո՞ր կոֆերմենտներն են գործում պիրոխաղողաթթվի օքսիդային դեկարբօքսիլացման համալիրում:
47. Որո՞նք են գլյուկոզի սինթեզի էլանյութերը:
48. Ածխաջրային փոխանակության ո՞ր ուղին է էներգիային առուժնով ավելի արդյունավետ:
49. Ո՞րն է ֆրուկտոզ-2,6-երկֆոսֆատի դերը նյութափոխանակությունում:
50. Ո՞ր ֆերմենտներն են կատալիզում պենտոզֆոսֆատային ուղու երկրորդ փուլի ռեակցիաները:
51. Ինչպե՞ս է ազդում ԱԵՖ-ի և ԱՄՖ-ի կոնցենտրացիաների տատանումը ֆոսֆոֆրուկտոկինազ ֆերմենտի ակտիվության վրա:
52. Կենդանական բջիջներում կարո՞ղ է ճարպաթթուներից կաթնաթթու սինթեզվել:
53. Կարո՞ղ է պիրոխաղողաթթվից սինթեզվել գլյուկոզ, եթե արգելակված են և՛ եռկարբոնատային ցիկլը, և՛ օքսիդային ֆոսֆորիլացումը:
54. Ո՞ր ֆերմենտն է կատալիզում գլիկոլենից գլյուկոզ-1-ֆոսֆատի անջատումը:

55. Ինչպե՞ս է ընթանում թրթնջկաքացախաթթվի փոխադրումը միտոքոնդրիումից բջջապլազմ:
56. Ի՞նչ խանգարումների են հանգեցնում մկանային գլիկոգենոզները:
57. Գլիկոլիզի ո՞ր ռեակցիաներն են անդարձելի:
58. Բջջի ո՞ր կոմպարտմենտում է ընթանում գլյուկոնեոգենեզը:
59. Ի՞նչ միացություն է առաջանում պենտոզֆոսֆատային ուղու օքսիդային փուլում:
60. Գլիկոլիզի ո՞ր ֆերմենտի կոֆերմենտն է ՆԱԳ-ը:
61. Ո՞րն է պենտոզֆոսֆատային ուղու գլխավոր կարգավորիչ ֆերմենտը:
62. Ո՞ր ֆերմենտն է կարգավորում գլիկոգենոլիզը:
63. Ո՞ր ֆերմենտներն են մասնակցում պիրոլիսադոլաթթվից ֆոսֆոէնոլպիրոլիսադոլաթթվի առաջացմանը:
64. Եռկարբոնատային ցիկլի առաջին անդարձելի ռեակցիան կատալիզում է կիտրոնաթթու սինթազ ֆերմենտը:
65. Ո՞ր ֆերմենտն է կատալիզում Կրեբսի ցիկլի հիդրատացման ռեակցիան:
66. Ո՞ր գործընթացներին է ներգրավվում պիրոլիսադոլաթթվից առաջացած քացախաթթվային-Կ₆Ա-ն:
67. Ո՞ր միացություններն են դառնում պիրոլիսադոլաթթվի աղբյուր, երբ մկաններում սպառվում է գլիկոգենի պաշարը:
68. Ո՞ր ֆերմենտն է կարգավորում գլիկոգենոգենեզը:
69. Ո՞ր ֆերմենտներն են կարգավորում եռկարբոնատային ցիկլը:
70. Ո՞ր միացությունն է գլյուկոզիլային մնացորդներ փոխադրում գլիկոգենոգենեզի ընթացքում:

Պատասխանել «այո» կամ «ոչ»

1. Բուսական օրգանիզմների զանգվածի 85-90% կազմում են ան-խաջրերը:
2. Բույսերում ցելյուլոզը ունի սննդային և պահեստային գործա-ռույթ:
3. Գլյուկոզը և ֆրուկտոզը էպիմերներ են:
4. Դեզօքսիռիբոզը նուկլեոտիդային կոֆերմենտների բաղադրիչ է:
5. Միաշաքարները L-շարքի միացություններ են:
6. Իգոկիտրոնաթթու դեհիդրոգենազը Կրեբսի ցիկլի կարգավորիչ ֆերմենտ է:
7. Սաքաթթվային-K_oA-ն մակրոէրգիկ միացություն է:
8. Պիրոլիսադոլաթթվի և α -կետոգլուտարաթթվի օքսիդային դեկար-բօքսիլացումը հնարավոր չէ առանց ԹԿՖ-ի, լիպոաթթվի, ՆԱԴ-ի:
9. Կրեբսի ցիկլի բոլոր ֆերմենտները տեղակայված են բջջապլազ-մում:
10. Եռկարբոնատային ցիկլի արագությունը կախված է բջջում ՆԱԴ⁺-ի, ՆԱԴH(H⁺)-ի կոնցենտրացիաներից:
11. Եռկարբոնատային ցիկլի արագությունը կախված չէ բջջում ԱԵՖ-ի, ԱԿՖ-ի կոնցենտրացիաներից:
12. Գլյուկոզի օքսիդացումը մինչև CO₂ ընթանում է Կրեբսի ցիկլում:
13. H₂O-ն և CO₂-ը գլյուկոզի անթթվածնային օքսիդացման վերջնա-նյութերն են:
14. Բջջում ԱԵՖ/ԱԿՖ կոնցենտրացիան ազդում է հյուսվածքային շնչառության արագության վրա:
15. Պենտոզֆոսֆատային ուղին ՆԱԴ·H⁺·H⁺-ի հիմնական մատա-կարարն է:
16. Նուկլեոտիդների սինթեզը կախված չէ գլյուկոզի փոխանակու-թյան պենտոզֆոսֆատային ուղուց:
17. Պենտոզֆոսֆատային ուղու բոլոր ֆերմենտները տեղակայված են միտոքոնդրիումներում:

18. Պենտոզֆոսֆատային ուղում գլյուկոզի լիարժեք քայքայման արդյունքում առաջանում է 30 մոլեկուլ ԱԵՖ:
19. Պենտոզֆոսֆատային ուղու ռեակցիաների արդյունքում 6 մոլեկուլ ռիբուլոզ-5-ֆոսֆատից առաջանում է 5 մոլեկուլ գլյուկոզ-6-ֆոսֆատ:
20. ՆԱԳ-Ֆ⁺-ն տրանսալրոլազի կոֆերմենտն է:
21. Պիրոլիսադոլաթթու դեհիդրոգենազ ֆերմենտը մասնակցում է գլյուկոնեոգենեզին:
22. Գլյուկոնեոգենեզը գլյուկոզի սինթեզն է ոչ ածխաջրային ելանյութերից:
23. Գլիօքսալատային ցիկլը հնարավորություն է տալիս ճարպերից սինթեզել ածխաջրեր:
24. Ինսուլինը և պրոստագլանդինները խթանում են գլյուկոնեոգենեզի ֆերմենտների սինթեզը:
25. Գլիցերալդեհիդֆոսֆատը գլյուկոնեոգենեզի ելանյութ է:
26. Ֆոսֆոէմոլալիրոլիսադոլաթթվից պիրոլիսադոլաթթվի առաջացման ռեակցիան դարձելի է:
27. Գլյուկոնեոգենեզի բոլոր ռեակցիաները ընթանում են բջջապլազմում:
28. Արբենալինը և գլյուկազոնը նպաստում են գլիկոգենի սինթեզին:
29. Մկանային հյուսվածքներում բարձր ակտիվություն է ցուցաբերում գլյուկոկինազ ֆերմենտը:
30. Ածխաջրային փոխանակության բոլոր ֆերմենտները ակտիվանում են ֆոսֆորիլացմամբ:
31. Պիրոլիսադոլաթթու կարբօքսիլազը ՆԱԳ-կախյալ ֆերմենտ է:
32. Գլիցերոլը գլյուկոնեոգենեզի ելանյութ է:
33. Կրեբսի ցիկլի արգասիքները կարող են մասնակցել գլյուկոզի սինթեզին:
34. Ամիլազը ճեղքում է 1,4-գլիկոզիդային կապերը:
35. Մալթազը ճեղքում է մալթոզը ֆրուկտոզի և գլյուկոզի:
36. Ֆոսֆոֆրուկտոկինազը գլիկոլիզը և գլիկոգենոլիզը կարգավորող ֆերմենտ է:

37. Գլյուկոզի ֆոսֆորիլացումը անհրաժեշտ է նյութափոխանակության գործընթացներին ներգրավվելու համար:
38. Գլիկոլիզը ուղեկցվում է ՆԱԴ-ՖH(H⁺)-ի կուտակմամբ:
39. ԱԵՖ-ի և ՆԱԴ-ՖH(H⁺)-ի առաջացումը բնորոշում է անաբոլիկ (նյութագոյացնող) գործընթացները:
40. Ինսուլինը կասկադային մեխանիզմով ակտիվացնում է ֆոսֆորիլազ «b»-ն:
41. Գլիկոլիզի բոլոր ռեակցիաները դարձելի են:
42. Սպիրտային խմորումն ուղեկցվում է ՆԱԴ:H(H⁺)-ի կուտակմամբ:
43. Ալյուլազը ճեղքում է ֆրուկտոզ-1,6-երկֆոսֆատը:
44. Կաթնաթթուդեհիդրոգենազային ռեակցիան անդարձելի է:
45. Կրեբսի ցիկլի ռեակցիաների արագությունը կարգավորվում է իզոկիտրոնաթթու դեհիդրոգենազ և կիտրոնաթթու սինթազ ֆերմենտներով:
46. Կիտրոնաթթուն ինքնուրույն կարող է փոխադրվել միտոքոնդրիումից բջջապլազմ:
47. Կրեբսի ցիկլը կոդարի գործել, եթե միտոքոնդրիումներում աճի ԱԵՖ-ի կոնցենտրացիան:
48. Զննության ժամանակ ուսանողի արյունում գլյուկոզի 7,2 մմոլ/լ կոնցենտրացիան ֆիզիոլոգիական նորմա չէ:
49. Կաթնաթթվի օքսիդացումը կատալիզող կաթնաթթու դեհիդրոգենազի տարբեր իզոմերների առկայությունը պայմանավորված է հյուսվածքներում օքսիդային փոխանակության առանձնահատկություններով:
50. Սաթաթթու դեհիդրոգենազը կատալիզում է սաթաթթվի օքսիդացումը:
51. Գլիկոլիզի բոլոր ֆերմենտները տեղակայված են բջջապլազմում:
52. Պիրոլիսաղոլաթթու կարբօքսիլազ ֆերմենտը մասնակցում է գլյուկոնեոգենեզին:
53. Ֆրուկտոզ-6-ֆոսֆատը գլիկոլիզի ալոստերիկ կարգավորիչ է:
54. ՆԱԴ⁺-ը պենտոզֆոսֆատային ուղու տրանսկետոլազ ֆերմենտի կոֆերմենտն է:

55. Գլիկոզամինոզլիկանները կառուցվածքային հետերոբազմաշաքարներ են:
56. Հեքսոզ-1-ֆոսֆատուրիլլիտրանաֆերազի ակտիվության արգելակումը գալակտոզեմիայի պատճառ է:
57. Գլյուկոկորտիկոիդները խթանում են գլյուկոնեոգենեզի ֆերմենտների սինթեզը:
58. Հեքսոկինազը Cu^{2+} կախյալ ֆերմենտ է:
59. Կրեբսի ցիկլում չի ընթանում ելանյութային ֆոսֆորիլացում:
60. ՈւԵՖ-ն մասնակցում է գլիկոզենի սինթեզին:
61. Լակտազը կատալիզում է բոլոր երկշաքարների ճեղքումը:
62. Ածխաջրային փոխանակության խանգարումները պայմանավորված են երկշաքարները ճեղքող ֆերմենտների անբավարարությամբ:
63. Թթվածնի անբավարարության պայմաններում բջջում նվազում է կաթնաթթվի քանակությունը:
64. Արյունում գլյուկոզի քանակության փոփոխությունը ածխաջրային փոխանակության հիմնական կենսաքիմիական ցուցանիշն է:
65. Պենտոզֆոսֆատային ուղու օքսիդային փուլում սինթեզվում են պենտոզներ:
66. Հանգստի պայմաններում արյունում կաթնաթթվի կոնցենտրացիան 1 մմոլ/լ է:
67. Գլիկոզենի քայքայումը խանգարվում է գլիկոզենֆոսֆորիլազ ֆերմենտի ֆոսֆորիլացման արդյունքում:
68. Ագլիկոզենոզների զարգացումը գլիկոզենի սինթեզի խանգարման հետևանք է:
69. Բջջապլազմային ՆԱԴ-H⁺·H⁺-ից ջրածնի փոխադրումը միտոքոնդրիումներ իրականացնում են մաքոքային մեխանիզմները:
70. Ֆրուկտոզ-1,6-երկֆոսֆատազը գլյուկոնեոգենեզի կարգավորիչ ֆերմենտ է:

**ԳԼՈՒԽ 3. ԼԻՊԻԳՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ,
ՀՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

1. Լիպիդները քիմիական կազմով տարաբնույթ են, սակայն ունեն կառուցվածքային ընթանրություն և բաղկացած են.
 1. հիդրոֆիլ և հիդրոֆոբ հատվածներից
 2. կարբոնաթթուներ պարունակող հիդրոֆիլ հատվածից
 3. ֆոսֆորական թթու պարունակող հիդրոֆոբ հատվածից
 4. կարբոնաթթուներ պարունակող հիդրոֆոբ և ֆոսֆորական թթու պարունակող հիդրոֆոբ հատվածներից
 5. բոլոր պատասխանները ճիշտ են
2. Լիպիդների կառուցվածքային բաղադրիչ են.
 1. հազեցած միակարբոնաթթուները և ացետիլխոլինը
 2. միա և երկատոմ սպիրտները
 3. չհազեցած միակարբոնաթթուները և ճարպալուծ վիտամինները
 4. ազոտային հիմքերը և բազմաշաքարները
 5. բոլոր պատասխանները ճիշտ են
3. Լիպիդների կազմի ճարպաթթուները պարունակում են.
 1. գծային անխաջրածնային շղթաներ
 2. ցիկլոպրոպանային օղակներ
 3. մեթիլենային խմբով բաժանված չհազեցած կապեր
 4. միակարբոնաթթուներ
 5. գույգ թվով անխաձնի ատոմներ
4. Ֆիզիոլոգիապես կարևոր չհազեցած ճարպաթթու է.
 1. լինոլեաթթուն
 2. պալմիտինաթթուն
 3. պալմիտաօլեինաթթուն
 4. լիզոնցերինաթթուն
 5. արախիդոնաթթուն
5. Չհազեցած ճարպաթթու է.
 1. միրիստինաթթուն

2. ստեարինաթթուն
 3. լինոլեաթթուն
 4. արախիդինաթթուն
 5. պալմիտինաթթուն
6. Հագեցած ճարպաթթու է.
1. օլեինաթթուն
 2. արախիդոնաթթուն
 3. լինոլենաթթուն
 4. ստեարինաթթուն
 5. պալմիտաօլեինաթթուն
7. Ո՞ր ճարպաթթուն է միաչհագեցած.
1. լինոլենաթթուն
 2. պալմիտինաթթուն
 3. արախիդինաթթուն
 4. պալմիտաօլեինաթթուն
 5. լինոլեաթթուն
8. Ո՞ր ճարպաթթուն է բազմաչհագեցած.
1. պալմիտաօլեինաթթուն
 2. արախիդինաթթուն
 3. միրիստինաթթուն
 4. բեզենաթթուն
 5. արախիդոնաթթուն
9. Անփոխարինելի ճարպաթթու է.
1. ստեարինաթթուն
 2. լինոլենաթթուն
 3. արախիդինաթթուն
 4. օլեինաթթուն
 5. պալմիտինաթթուն
10. Հագեցած ճարպաթթու է.
1. օլեինաթթուն
 2. արախիդոնաթթուն
 3. լաուրինաթթուն

4. կլուպանդոնաթթուն
 5. ներվոնաթթուն
11. Միացություններից ո՞րն է ստերին.
 1. ռետինոլը
 2. խոլեստերինը
 3. կատեխոլամինները
 4. էյկոզանոլները
 5. բոլոր նշված միացությունները
 12. Անփոխարինելի ճարպաթթու է.
 1. ստեարինաթթուն
 2. արախինաթթուն
 3. արախիդոնաթթուն
 4. օլեինաթթուն
 5. միրիստինաթթուն
 13. Չհագեցած ճարպաթթու է.
 1. բեզենաթթուն
 2. լաուրինաթթուն
 3. լինոլենաթթուն
 4. արախինաթթուն
 5. պալմիտինաթթուն
 14. Քանի՞ կրկնակի կապ ունի արախիդոնաթթուն.
 1. մեկ
 2. երկու
 3. երեք
 4. չորս
 5. կրկնակի կապ չունի
 15. Քանի՞ կրկնակի կապ ունի լինոլենաթթուն.
 1. մեկ
 2. երկու
 3. երեք
 4. չորս
 5. կրկնակի կապ չունի

16. Լինուլեաթթուն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.
 1. 18 : 1; 9
 2. 18 : 2; 9,12
 3. 18 : 3; 9, 12, 15
 4. 20 : 4; 5, 8, 11, 14
 5. 16:0

17. Ճարպաթթուներում կրկնակի կապերը տարագատված են.
 1. ամինային խմբով
 2. մեթիլենային խմբով
 3. սպիրտային խմբով
 4. կիսաացետալային խմբով
 5. տարագատված չեն

18. Նշել ճիշտ արտահայտությունը.
 1. լիպիդներում առկա են միայն կարճ շղթայով միաչիագեցած ճարպաթթուներ
 2. լիպիդների կազմում չկան միաչիագեցած ճարպաթթուներ
 3. ցիս-իզոմերների ձևով, քանի որ այդ կազմաձևը նպաստում է ամխաջրածնային շղթաների սեղմ դասավորվածությանը
 4. տրանս-իզոմերների ձևով, քանի որ այդ կազմաձևը նպաստում է ամխաջրածնային շղթաների սեղմ դասավորվածությանը
 5. լիպիդների կազմում չկան բազմաչիագեցած ճարպաթթուներ


19. Լիպիդներն ըստ հիմնային (կամ թթվային) հիդրոլիզի դասակարգվում են.
 1. սֆինգոլիպիդներ
 2. պարզ լիպիդներ
 3. բարդ լիպիդներ
 4. չօճառացվող լիպիդներ
 5. գլիկոլիպիդներ

20. Չօճառացվող լիպիդներ են.
 1. եռացիլգլիցերոլները
 2. տերպենները
 3. մոմերը

4. սֆինգոֆոսֆոլիպիդները
 5. գլիցերոֆոսֆոլիպիդները
21. Ստերոլիդ է (են).
1. էյկոզանոլիդները
 2. գանգլիոզլիդները
 3. լեցիտինը
 4. կատեխոլամինները
 5. վիտամին D-ն
22. Լինոլեաթթուն, լինոլենաթթուն, արախիդոնաթթուն անվանում են նաև.
1. վիտամին B₃
 2. վիտամին E
 3. վիտամին F
 4. վիտամին PP
 5. վիտամին D
23. Պարզ լիպիդներ են.
1. ցերեբրոզլիդները
 2. սֆինգոլիպիդները
 3. գլիցերոլիպիդները
 4. եռացիլգլիցերոլները
 5. գանգլիոզլիդները
24. Միացություններից ո՞րն է գլիցերոֆոսֆոլիպիդ.
1. եռացիլգլիցերոլը
 2. կարոլիոլիպինը
 3. ցերեբրոզլիդը
 4. սֆինգոզլինը
 5. ֆոսֆատիդաթթուն
25. Միացություններից ո՞րն է սֆինգոֆոսֆոլիպիդ.
1. եռացիլգլիցերոլը
 2. լեցիտինը
 3. սֆինգոմիելինը
 4. ցերեբրոզլիդը

5. սֆինգոզիներ

26. Անվանել եռացիլգլիցերոլը.



1. 1-ստեարոիլ-2-օլեինոիլ-3-լինոլեոիլգլիցերոլ
2. 1-պալմիտոիլ-2-օլեինոիլ-3-ստեարոիլգլիցերոլ
3. 1-օլեինոիլ-2-լինոլեոիլ-3-պալմիտոիլգլիցերոլ
4. 1-լինոլեոիլ-2-ստեարոիլ-3-օլեինոիլգլիցերոլ
5. 1-լինոլեոիլ-2օլեինոիլ-3-պալմիտոիլգլիցերոլ

27. Նշված միացություններից ո՞րն է գլիկոլիպիդ.

1. N-ացետիլնեյրամինաթթուն
2. ֆոսֆատիդիլսերինը
3. ֆոսֆատիդիլինոզիտոլը
4. N-ացետիլգլյուկոզամինը
5. գալակտոզիլցերամիդը

28. Միացություններից ո՞րը գլիցերոֆոսֆոլիպիդ չէ.

1. սֆինգոմիելինը
2. ֆոսֆատիդիլսերինը
3. պլազմալոզենը
4. կարդիոլիպինը
5. ֆոսֆատիդիլէթանոլամինը


29. Սֆինգոֆոսֆոլիպիդների և գլիկոլիպիդների ընդհանուր բաղադրիչ է.

1. խոլինը
2. գլիցերոլը
3. սերինը
4. սֆինգոզինը
5. ֆոսֆորական թթուն

30. Միացություններից ո՞րը գլիցերոֆոսֆոլիպիդ չէ.
 1. կարդիոլիպինը
 2. լեցիտինը
 3. կեֆալինը
 4. ցերեբրոզիդը
 5. պլազմալոգենը
31. Սֆինգոլիպիդների և գլիցերոֆոսֆոլիպիդների ընդհանուր բաղադրիչ է.
 1. ինոզիտոլը
 2. գլիցերոլը
 3. ֆոսֆորական թթուն
 4. սֆինգոզինը
 5. N-ացետիլգլյուկոզամինը
32. Միացություններից ո՞րն է գլիկոլիպիդ.
 1. ֆոսֆատիդիլէթանոլամինը
 2. կարդիոլիպինը
 3. գանգլիոզիդը
 4. կեֆալինը
 5. N-ացետիլնեյրամինաթթուն
33. Ազոտ պարունակող լիպիդներ են.
 1. խոլեստերինը
 2. ճարպալուծ վիտամիններ A, E, K-ն
 3. կարդիոլիպինը
 4. ֆոսֆատիդիլխոլինը
 5. եռացիլգլիցերոլը
34. Ո՞ր միացության ածանցյալներն են ստերոիդները.
 1. ցիկլոպենտանպերիլոլոֆենանտրենի
 2. ցիկլոպենտանի
 3. պրոտոպորֆիրինի
 4. պերիլոլոֆենանտրենի
 5. ցիկլոպորֆիրինի
35. Պահեստային լիպիդներ են.
 1. սֆինգոֆոսֆոլիպիդները




2. եռացիլգլիցերոլները
 3. խոլեստերինը
 4. գլիցերոֆոսֆոլիպիդները
 5. ցերեբրոզիդները
36. Պահեստային լիպիդներին բնորոշ է.
1. պարունակվում են բջջաթաղանթներում
 2. պարունակում են ազոտային հիմք
 3. չեն ծախսվում օրգանիզմի էներգիային պահանջների համար
 4. կառուցվածքի սպիրտային հատվածը ներկայացված է գլիցերոլով
 5. պարունակում են ֆոսֆատային խումբ
37. Ներկայացված լիպիդներից ո՞րն է պարունակում ֆոսֆորական թթու.
1. միաացիլգլիցերոլը
 2. երկացիլգլիցերոլը
 3. կեֆալինը
 4. պրոստագլանդինը
 5. սպերմացետը
38. Ֆոսֆոլիպիդների դասին է պատկանում.
1. N-ացետիլգլալկտոզամինը
 2. N-ացետիլնեյրամինաթթուն
 3. ցերեբրոզիդը
 4. սֆինգոմիելինը
 5. գանգլիոզիդը
39. Ֆոսֆատիդաթթուն.
1. քազմաչիագեցած ճարպաթթու է
 2. միաչիագեցած ճարպաթթու է
 3. գլիցերոֆոսֆոլիպիդների սինթեզի ելանյութ է
 4. խոլեստերինի սինթեզի միջանկյալ արգասիք է
 5. գանգլիոզիդների սինթեզի միջանկյալ արգասիք է
40. Բջջաթաղանթի կազմում ներգրավված չեն.
1. խոլեստերինը

2. եռացիլզվիցերոլը
 3. սֆինգոմլինելինը
 4. գլիցերոֆոսֆոլիպիդները
 5. գլիկոլիպիդները
41. Կետոնային մարմին է.
1. քացախաթթվային-K_oA-ն
 2. β-օքսի-β-մեթիլզլյուտարիլ-K_oA-ն
 3. β-օքսիկարագաթթուն
 4. β-ալանինը
 5. խոլեստերինը
42. Կետոնային մարմին է.
1. ացետոացետատը
 2. միզանյութը
 3. α-հիդրօքսիզլյուտարաթթուն
 4. քացախաթթվային-K_oA-ն
 5. սկվալենը
43. Ո^oր կազմաձևն է բնորոշ չհագեցած ճարպաթթուներին.




44. Առաջնային լեղաթթու է.
1. դեզօքսիխոլաթթուն
 2. խենոդեզօքսիխոլաթթուն
 3. լիտոլխոլաթթուն
 4. տաուրոլխոլաթթուն
 5. ալոլխոլաթթուն
45. Նշված միացություններից ո^oրն է լեղաթթու.
1. տաուրինը

2. տաուրոխոլաթթուն
 3. 3,12-խենոդեզոքսիխոլաթթուն
 4. 7-լիտոխոլաթթուն
 5. 3,7-դեզոքսիխոլաթթուն
46. Գլիցերոլ պարունակող լիպիդ է.
1. գանգլիոզիդը
 2. սֆինգոլիպիդը
 3. կարդիոլիպինը
 4. ցերեբրոզիդը
 5. սկվալենը
47. Որոշ գլիցերոֆոսֆոլիպիդների կազմում առկա է.
1. ինուլին
 2. ազոտային հիմք
 3. խոլեստերին
 4. ածխաջրային միացություն
 5. սֆինգոզին
48. Եռացիլգլիցերոլների կազմում առկա է.
1. սերին
 2. սֆինգոզին
 3. H_3PO_4
 4. էթանոլամին
 5. գլիցերոլ
49. Անվանել ճարպաթթուները.



50. Էյկոզանոլոլ է.
1. լանոստերոլը
 2. սկվալենը
 3. արախինաթթուն
 4. պրոստադիլանդիներ
 5. խոլանաթթուն


51. Լրացնել կեֆալինի կառուցվածքը.



52. Գլիկոլիպիդների բաղադրիչ է.

1. ֆոսֆորական թթուն
2. գլիցերոլը
3. սֆինգոզինը
4. սերինը
5. խոլինը


53. Լրացնել գլիցերոֆոսֆոլիպիդի կառուցվածքը և անվանել միացությունը.



54. Ո՞ր միացությունների նախանյութ է խոլեստերինը.

1. վիտամին A-ի
2. ճարպաթթուների
3. վիտամին E-ի
4. լեղաթթուների
5. ֆոսֆոլիպիդների


55. Լրացնել լեցիտինի կառուցվածքը




56. Գլիցերոլի ածանցյալ են.

1. պլազմալոգենները
2. ցերեբրոզիդները
3. սֆինգոմիելինները
4. գանգլիոզիդները
5. մոմերը


57. Լրացնել ֆոսֆատիդաթթվի կառուցվածքը.




58. Անվանել լիպիդը և լրացնել կառուցվածքը.



59. Անվանել լիպիդը և լրացնել կառուցվածքը.



60. Անվանել լիպիդը և լրացնել կառուցվածքը.



ԳԼՈՒԽ 4. ԼԻՊԻԳՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

61. Խիլոմիկրոնները.
 1. աթերոզեն միացություններ են
 2. փոխադրում են խոլեստերինը ծայրամասային հյուսվածքներից լյարդ
 3. փոխադրում են էկզոզեն եռացիլգլիցերոլները
 4. փոխադրում են էնդոզեն եռացիլգլիցերոլները
 5. փոխադրում են խոլեստերինը լյարդից ծայրամասային հյուսվածքներ
62. Կետոնային մարմինները սինթեզվում են.
 1. ճարպային հյուսվածքում
 2. աղեստամոքսային ուղիներում
 3. կմախքային մկաններում
 4. լյարդում
 5. երիկամներում
63. Խոլեստերինի սինթեզի հիմնական վայրն է.
 1. թոքերը
 2. երիկամները
 3. լյարդը
 4. մաշկը
 5. սրտամկանը
64. Ի՞նչ միացություններ են սինթեզվում խոլեստերինից.
 1. կետոնային մարմիններ
 2. խոլանաթթուներ
 3. պուրիններ
 4. ճարպաթթուներ
 5. բոլոր նշված միացություններ
65. Արյան պլազմում եռացիլգլիցերոլները շրջանառվում են.
 1. ինքնուրույն
 2. միացած ալբումինին
 3. շատ ցածր խտության լիպոպրոտեինների կազմում

4. միցելների կազմում
 5. միացած կարնիտինին
66. Օրգանիզմում բարձր խտության լիպոպրոտեինները ձևավորվում են.
1. էրիթրոցիտներում
 2. ճարպային հյուսվածքում
 3. հեպատոցիտներում
 4. էնտերոցիտներում
 5. մկաններում
67. Օրգանիզմում ցածր խտության լիպոպրոտեինները ձևավորվում են.
1. շարակցական հյուսվածքում
 2. էրիթրոցիտներում
 3. ճարպային հյուսվածքում
 4. արյան պլազմում
 5. հեպատոցիտներում
68. Արյան պլազմում երկար շղթայով ճարպաթթուները շրջանառվում են.
1. ինքնուրույն
 2. լիպոպրոտեինների թաղանթի կազմում
 3. միացած կարնիտինին
 4. միացած ալբումինին
 5. չեն շրջանառվում
69. Նշված ճարպաթթուներից ո՞րն է ավելի հեշտ օքսիդանում.
1. միրիստինաթթուն
 2. օլեինաթթուն
 3. լինոլեաթթուն
 4. արախինաթթուն
 5. պալմիտինաթթուն
70. Ճարպերի քայքայման գործընթաց է.
1. գլիկոլիզը
 2. գլիկոլենոլիզը

3. լիպոլիզը
 4. β-օքսիդացումը
 5. լիպոգենեզը
71. Լիպոգենեզը.
1. ճարպերի քայքայումն է
 2. կրեատինի սինթեզն է
 3. գլիցերոլի սինթեզն է
 4. ճարպերի սինթեզն է
 5. խոլեստերինի սինթեզն է
72. Ածխաջրերից էներգեն ճարպը սինթեզվում է.
1. աղիների լորձաթաղանթում
 2. մկաններում
 3. ճարպային հյուսվածքում
 4. երիկամներում
 5. սրտամկանում
73. Խոլեստերինի սինթեզի ընթացքում առաջացող միջանկյալ արգասիք է.
1. սֆինգոզիներ
 2. խոլինը
 3. սկվալենը
 4. մալոնիլ-CoA-ն
 5. ացետոացետատը
74. Լյարդում առաջնային լեղաթթուները կոնյուգացվում են.
1. գլյուկուրոնաթթվով
 2. ալանինով
